Կոնդակով Մերով առաջադրեմք գերապատուութեանդ ընթանալ համաձայն պահանջման օրինաց։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ. ամէն։

Ի 10 մարտի 1913 ամի
Ըստ Տոմարիս ՌՀԿԲ
Ի Հայրապետութեան Մերում Բ. ամի
յԱբարատեան Մ. Աթոռ ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 418—422

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին յայտնել պ. Բարսեղ Իսթանպօլուեանին, թէ իւր գրաւոր խնդրի համաձայն, Նորին Սրբութեան կոնդակով արձակուած է Մայր Աթոռի գանձապահութեան պաշտօնից։ 12 յունիսի, Թ. 899։

Կոնդակ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի անունով՝ որով տառերի գիւտի 1500-ամեայ և Հայ տպագրութեան 400-ամեայ Մեծ Յոբելեանի առթիւ յանձնարարուեց դպրոցական դրամագլխի հիմք դնել՝ Ազգային ժողովի հովանաւորութեան ներքոյ։ 12 յունիսի, Թ. 900։

Կոնդակ հանգուցեալ Սարգիս Խոճեանի կտակատարների անունով, որով յանձնարարուեց փոխադրել հանգուցեալի կտակագումարը Նորին Սրբութեան անունով՝ ս. Սինոդի գանձարանում պահելու և տոկոսները եկեղեցական ծխական դպրոցների օգտին գործադրելու համար։ 13 յունիսի, Թ. 903։

Կոնդակ գերաշնորհ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց շնորհունակ Տ. Գէորգ սարկաւագ Զէօրէկչեանին արեղայ ձեռնադրել իսկ անդրանիկ պատա-

բաղից յետոյ՝ տալ վարդապետական կոչում և ձեռնադրութեան վկայականն ուղարկել Սինոդին հաստատելու համար։ 16 յունիսի, թ. 905։

Կոնդակ նոյն Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց ձեռնադրել Կարապետ Մարտիրոսեան Յարութիւնեանցին սարկաւագ և ձեռնադրութեան վկայականն ուղարկել Սինոդին հաստատելու համար։ 16 յունիսի, թ. 906։

Նորին Վեհափառութեան մակադրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Նոր-Նախիջևանի Հայոց հոգևոր թեմական դպրանոցի տեսուչ պ. Երուանդ Շահ-Ազիզի դրպրոցական ֆոնդի օգտին ուղարկած 143 բուբլի 35 կոպ. գումարը։ 16 յունիսի, թ. 907։

Դիւանի դրութեամբ յայտնուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ի գիտութիւն, թէ Նորին Սրբութեան բարեհաճ կարգադրութեամբ Նորբնծայ Կարապետ սարկաւագ Յարութիւնեանցը կարգուած է տպարանական վարչութեան անդամ։

Այդ մասին տեղեկութիւն տրուեց և Կարապետ սարկաւագին։ 18 յունիսի, թ. թ. 925, 926։

Դիւանի դրութեամբ ուղարկուեց Պարսկա-Հնդկաստանի առաջնորդական խորհրդարանին ս. Ամենափրկիչ վանքի կնիքը։ 19 յունիսի, թ. 929։

Կոնդակ Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետի անունով, որով յայտնուեց պ. պ. Պօղոս, Արշակ, Յակոբ և Աբրահամ Ղուկասեանների հաշուով, նրանց հանգուցեալ Մարիամ քրոջ յիշատակը յաւերժացնելու համար, Շուշում հիմնած «Մարիամ-Ղուկասեան» օրիորդաց դպրոցի բացման մասին։ 20 յունիսի, թ. 933։

Կոնդակ պ. պ. Պօղոս, Արշակ, Յակոբ և Աբրահամ Ղուկասեանների անունով, որով հաստատուեց Շուշում

բացուելիք «Մարիամ-Ղուկասեան» օրիորդաց դպրոցի՝ նոցա ուղարկած կանոնները։ 22 յունիսի, թ. 957։

Կոնդակ նոր Նախիջևանի թեմական դպրանոցի հոգաբարձութեան նախագահ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի անունով, որով փոփոխութեան ենթարկուեց, հոգաբարձութեան և առաջնորդի խնդրի համաձայն, թեմական դպրանոցի կանոնադրութեան 34, 44, 58, 65, 71 և 74-րդ յօդուածները։ 22 յունիսի, թ. 958։

Կոնդակ Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով իւր միջնորդութեան և խնդրի համաձայն, Կարապետ սարկաւագ Յարութիւնեանը կարգուեց իբրեն օգնական։ 22 յունիսի, թ. 965։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ամերիկայի Հայոց Ազգային Կենդրոնական Վարչութեան կարգադրել թոյլ չտալ քահանայագործութիւն անել Տիգրանակերտի Պետրոս քահանայ Վարդանեանին։ 24 յունիսի, թ. 971։

Կոնդակ Մեղրիի շրջանի Վահրավա գիւղի ծխական հոգաբարձութեան անունով՝ եկեղեցական-ծխական դպրոցի բացման մասին։ 24 յունիսի, թ. 977։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Բագուի Տաճատ աւագ քահանայ Մարաղեանին, որ թոյլատրուում է տպագրել իւր կազմած «Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքն ու վարդապետութիւնը» Բ-րդ հրատարակութեամբ։ 4 յուլիսի, թ. 996։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ վերադարձուեց և պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին իւր անդամներից առանձին յանձնաժողով կազմել քննելու Հայոց թեմական հաստատութիւններում աշխարհական ծառայողների կենսաթոշակի կանոնադրութեան մասին յայտնած կարծիքները, նորից վերամշակել կանոնադրութիւնը և ըստ այնմ տնօրինել։ 4 յուլիսի, թ. 1003։

Կոնդակ օրհնութեան այրի տիկին Մարգարիտ Աբիանցի անունով՝ Բագուի ս. Լուսաւորիչ եկեղեցու բակի

շուրջը երկաթեայ ցանկապատ շինել տալու համար։ 10 յուլիսի, թ. 102)։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի լուսարարապետին մի ձեռք յարմարաւոր եկեղեցական զգեստ ուղարկել Սուլթան–Նուխի գիւղի եկեղեցուն։ 10 յուլիսի, թ. 1025։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Երևանի փոխ–թեմակալին, որ չի թոյլատրուում քահանայագործութիւն անել Ղարսի շրջանի Խաչատուր քահանայ Ենկոյեանին և Պետրոս քահանայ Թովմասեանին, որոնք ծխական կանոնադրութեամբ պահանջուած ուսման վկայական չունեն։ 17 յուլիսի, թ. 1034։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Նոր–Բայազիտի գաւառի Ղշլաղ գիւղի բնակիչ Ներսէս Սաքէյեանի անունով՝ նոյն գիւղում իւր սեպհական միջոցներով դպրոցական շէնք կառուցանելու առթիւ։ 17 յուլիսի, թ. 1037։

Կոնդակ Երևանի փոխ–թեմակալ գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց, համաձայն իւր միջնորդութեան, Աղէքսանդրապոլի Ս. Աստուածածնի «Եօթն–Վիրաց» պատկերի արդիւնքն երեք հաւասար մասերի բաժանել, որի մի երրորդ մասը տալ Հառիճի դպրոցին, մի երրորդ մասը Արղութեան օրիորդաց դպրոցին և մնացած մի երրորդ մասը Աղէքսանդրապոլի ս. Լուսաւորիչ եկեղեցու «Խրիմեան» ծխական դպրոցին։ 17 յուլիսի, թ. 1029։

Կոնդակ Ղարաբաղի թեմական Հոգևոր դպրանոցի Հոգաբարձութեան և թեմի հայ ժողովրդի անունով՝ բարեգործ պ. Բաղդասար Արզումանեանի նոյն դպրանոցի օգտին նուիրաբերած 200000 ռուբ. դրամագլխի մասին։ 18 յուլիսի, թ. 1042։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց կարգադրել որ Սինոդի անդամի ներկայութեամբ

Մայր Աթոռի թանգարանի իրերը կարգաւորեն Խաչիկ Ծ. վարդապետը և Ե. Լալայեանը. աւարտելուց յետոյ բոլոր պահարանները կնքել Սինոդի կնքով։ 18 յուլ., թ. 1044։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Բաղդասար Արզումանեանի անունով՝ Ղարաբաղի Հայոց Հոգևոր թեմական դպրանոցի օգտին նուիրաբերած 200000 ռուբլի դրամագլխի համար։ 10 յուլիսի, թ. 1045։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Միքայէլ Արամեանի անունով՝ Շուշում գտնուած իւր սեպհական տունը Ղարաբաղի թեմական դպրանոցի օգտին նուիրաբերելու համար։ 18 յուլիսի, թ. 1069

Կոնդակ օրհնութեան Ղարաբաղի հոգևոր թեմական դպրանոցի անունով՝ Դպրանոցի 75-ամեայ յոբելենական ճանձնաժողովի և Դպրանոցի հոգաբարձութեան անունով՝ դպրանոցի 75-ամեայ յոբելեանի կատարման առթիւ։ 22 յուլիսի, թ. 1074։

Նորին Սրբութեան մակագրութիւն Շամախու կոնսիստորիայի թ. 1185 յայտարարութեան վրայ. «եթէ Բագուի Հայոց եկեղեցւոյ երեսփոխանը, ծխական հոգաբարձութիւնը և ծխականաց ընդհանուր ժողովը չեն ցանկանում և դէմ են գործակալի ռոճիկը վճարելուն, պատւիրում ենք Շամախու թեմի գերաշնորհ Առաջնորդին՝ կարգադրել, որ բագուի գործակալ Արտակ վարդապետը թողնի իւր պաշտօնը և գայ ս. Էջմիածին։ Իսկ մինչ այժմ նրան հասանելի ռոճիկը վճարել թեմական արդիւնքից»։ 24 յուլիսի, թ. 1081։

Կոնդակ օրհնութեան Կ. Պօլսի Գալֆայեան Ազգային Որբանոցի հոգաբարձութեան անունով։ Նորին Սրբութիւնն իւր սեպհական միջոցներից ուղարկեց որբանոցին որպէս նպաստ երկու հարիւր ռուբլի։ 34 յուլիսի, թ. 1089։

Նորին Սրբութեան մակագրութիւն տառերի գիւտի 1500-ամեայ Մայր աթոռի յոբելենական ճանձնաժողովի նախագահի 20 յուլիսի յայտարարութեան վրայ. «ինկատի

ունենալով Ցորելենական կենդրոնական Ցանձնաժողովի անդամների սակաւութիւնը, նշանակում ենք Տ. Տ. Մուշէ, Ներսէս և Գէորգ վարդապետներին և Վրթանէս աբեղային և Ցանձնաժողովի անդամներ և պատուիրում ենք պարբերաբար ժողովներ գումարել՝ Ցորելենական տօնի հետ կապ ունեցող խնդիրների և ծրագրի մասին խորհրդակցելու և արդիւնքը զեկուցանելու մեզ ի տեղեկութիւն»։ 29 յուլիսի, թ. 1096։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ռուսաստանի թեմական Առաջնորդներին ներկայացնել նորին Սրբութեան իրենց շրջաբերական գրութիւններից մի-մի օրինակ ուղղած դպրոցական վարչութիւններին՝ ուսուցիչների համար նահանգապետներից հաճութիւն ստանալու մասին։ 29 յուլիսի, թ. թ. 1100—1104։

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ուղարկել ձրիաբար Կ. Պոլսի Գալֆայեան Ազգային որբանոցին «Արարատ» և ընթերցանութեան գրքեր։ 29 յուլիսի, թ. 1105։

Վեհափառ Հայրապետի հրամանով յանձնարարուեց Ռուսաստանի թեմական Առաջնորդներին, որ իրենց թեմի եկեղեցիներում դանձանակ շրջեցնեն Ռուսական Կարմիր-Խաչի հովանաւորութեան ներքոյ գտնուած բորոտների օգտին և ժողովուած դանձանակն ուղարկեն ս. Էջմիածնի Սինօդին՝ ըստ պատկանելոյն հասցնելու համար։ 30 յուլիսի, թ. 1106—1110։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆ.

Կոնդակ Բերայի Խորէն աւագ քահանայ Ցարութիւնեանցի անունով, որով նրան, համաձայն Կ. Պոլսի Հայոց Ազգային կենդրոնական վարչութեան կրօնական ժողովի միջնորդութեան, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 18 յունիսի, թ. 922։